

ԱՐՏԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ



ԱԶԳԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հոդվածի վերնագիրն է «Ազգային սոցիալական պետության գործառույթները»: Հոդվածը վերաբերում է սոցիալական պետության գործառույթների էությանը, բովանդակությանը և դրանց հիմնական առանձնահատկությունների վերլուծությանը:

Հոդվածում մանրամասն վերլուծության է ենթարկվել սոցիալական պետության գործառույթների իրականացման ավանդական, այն են՝ դիրեկտիվ-հրամայական, դիսպոզիտիվ և ինդիկատիվ (խորհրդակցական) մեթոդները, ինչպես նաև օրինական պարտադրման, համոզմունքի, կանխատեսման, նախագծման և պլանավորման կազմակերպման ու դրանց նկատմամբ վերահսկողության ձևերը:

Ավելին, ակնհայտ անբավարար է սոցիալական պետության սահմանափակումը միայն վերջինիս սոցիալական գործառույթների վերլուծությամբ, ուստի հոդվածում մանրակրկիտ անդրադարձ է կատարվում սոցիալական պետության գլխավոր խնդրին, որտեղ անհրաժեշտ է բավարար իրավական, տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային պայմաններ, որպեսզի անհատը, օգտվելով դրանցից, կարողանա ինքնուրույն ապահովել իր և իր ընտանիքի համար անհրաժեշտ բարեկեցիկ կյանք:

Հիմնաբաներ- սոցիալական, գործառույթ (ներ), տնտեսական, զարգացում, հասարակություն:

Սոցիալական պետության գործառույթների իրականացման ավանդական մեթոդներից են համարվում դիրեկտիվ-հրամայական, դիսպոզիտիվ և ինդիկատիվ (խորհրդակցական) մեթոդները, իսկ ձևերը՝ խթանումը, համոզումը և օրինական պարտադրումը, կանխատեսումը, նախագծումը, պլանավորումը, որոշումների ընդունման կազմակերպումն ու դրանց նկատմամբ վերահսկողությունը:

Մեր դեպքում (խոսելով սոցիալական պետության մասին) հատուկ դեր է խաղում խրախուսումը, օրինակ՝ արտաժամկետ և արտոնյալ վարկավորումը, բարեգործությամբ զբաղվող ձեռնարկատերերին հարկային արտոնությունների տրամադրումը, բարենպաստ իրավական և վարչական պայմանների ստեղծումը փոքր և միջին բիզնեսի զարգացման համար, ծնելիության խրախուսումը, բազմազավակ ընտանիքներին նյութական օգնության տրամադրումը և այլն: Գլխավորն այստեղ հանդիսանում է հասարակության պահանջումների և շահերի, պետության և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջև հաշվեկշռի պահպանումը:

Երկրի ներսում պետության հիմնական գործառույթները, ինչպես հայտնի է, հանդիսանում են քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգևոր-մշակութային գործառույթները: Սա նշանակում է, որ պետական-կառավարական գործու-

նեությունն ուղղված է նրան, որպեսզի՝

- ապահովի ներքին միասնությունը, երկրի անբաժանելիությունն ու անվտանգությունը, սահմանադրական կարգի պահպանումը՝ հասարակությանը սոցիալական հակասությունների, քաղաքական, էթնոազգային և կրոնական տարաձայնությունների, կոռուպցիայի, հանցագործ դրսևորումների պարագայում ինքնակործանումից պաշտպանելու համար.

- երաշխավորի ժողովրդի իշխանությունը.

- ապահովի տնտեսության զարգացման բարձր տեմպերը՝ պետական միջոցների ձևավորման և ռացիոնալ ծախսման միջոցով, օպտիմալ հարկերի սահմանումը, արդյունավետ մաքսային քաղաքականության իրականացումը, պետական սեփականության գրագետ կառավարումը և այլն.

- բարենպաստ սոցիալական, տնտեսական և քաղաքական պայմաններ ստեղծի սոցիալական ոլորտի՝ որպես մարդու բնակության սոցիալ-կենցաղային միջավայրի, դինամիկ զարգացման համար: Սա պետության գործունեության ոլորտն է անհատի ձևավորման, նրա դաստիարակության, կրթության, որպես մասնագետ ձևավորման ոլորտում: Սա գործունեությունն է սոցիալական պաշտպանության, կրթության, առողջապահության, հանգստի, սպորտի, կենսաթոշակային ապահովության ոլորտում.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

- ապահովի մարդկանց բնական կենսապայմանների պատշաճ պահպանությունը, մշտական բարելավումը և վերարտադրողականությունը:

Թվարկված գործառույթները կրում են միանգամայն հստակ սոցիալական ծանրաբեռնվածություն: Կախված քաղաքականության, տնտեսության, գիտության և կրթության, առողջապահության, էկոլոգիայի և այլ ոլորտներում ընդունվող որոշումների սոցիալականության բնույթից՝ մենք պատասխանում ենք այն հարցին, թե արդյոք պետությունը սոցիալական համարվում է, թե՞ ոչ: Սոցիալական, ինչպես արդեն նշել ենք, հանդիսանում է ավելին, քան պետությունը, որի պարտավորությունների մեջ մտնում են սոցիալ-տնտեսական շահերի բարձրաձայնումը, կենսաթոշակների և նպաստների վճարման երաշխավորումը:

Ժամանակակից սոցիալական պետությունը քաղաքացիական հասարակության նկատմամբ իրականացնում է պատերճալիստական գործառույթ՝ ազգային եկամտի վերաբաշխումը թույլերի և ընդհանրապես հասարակության շահերից ելնելով, այն որ սոցիալական պետականության գլխավոր սկզբունքը ազգային եկամտի վերաբաշխումն է՝ ընդհանուր հասարակության, մասնավորապես սոցիալապես խոցելի շերտերի շահերից ելնելով:

Գործառույթների բաշխումը և վերաբաշխումը, «աշխատանքի և սպառման չափի նկատմամբ» հաշվառումը և վերահսկողությունը, անկասկած, իշխանության կարևոր խնդիրներն են, բայց գլխավոր, բազային, ռազմավարական դրանք չեն հանդիսանում և այդպիսին չեն կարող լինել: Ժողովրդավարական իրավական պետությունը՝ իշխանական իրավասությունների իրացման հրամայավարչական մեթոդները չեն՝ անգամ թույլ և «ընչագուրկներին» աջակցելու ազնիվ նպատակներից ելնելով:

Պետության սոցիալական ուղղվածության գործառույթների բովանդակությունը սահմանվում է հետևյալ խնդիրներով.

1) սոցիալ-տնտեսական՝ ժողովրդական տնտեսության բարձր արդյունավետության օժանդակումը, տնտեսվարման որակյալ ենթակառուցվածքի ապահովումը, բնակչության ամենամեծ տնտեսական ակտիվության համար պայմանների ստեղծումը.

2) մշակույթի զարգացման աջակցումը՝ մարդու ստեղծագործական ընդունակությունների զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, նախադպրոցական դաստիարակության և

կրթության համակարգի, գիտական և պետությունից անկախ այլ մշակութային հիմնադրամների ֆինանսավորումը.

3) բնապահպանական՝ մարդկության բնակության միջավայրի պաշտպանությունը, վերականգնումը և ձևավորումը, էկոհամակարգերի իրատեսական օգտագործումը:

Ինչպես տեսնում ենք, սոցիալական է հանդիսանում այն պետությունը, որի յուրաքանչյուր գործառույթը (տնտեսական, սոցիալ-մշակութային, գիտատեխնիկական, բնապահպանական և այլն) կրում է լուրջ սոցիալական ծանրաբեռնվածություն, յուրաքանչյուր օրենքը և ենթաօրենսդրական ակտը ընդունվում է մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի դիրքերից, յուրաքանչյուր պետական կառավարչական որոշում գնահատվում է սոցիալական արդարության տեսանկյունից: Վերջին հաշվով տեղի է ունենում պետության տառացի բոլոր գործառույթների «սոցիալականացում»:

Բնութագրելով սոցիալական պետությունը՝ սահմանափակվել միայն նրա սոցիալական գործառույթների վերլուծությամբ ակնհայտ անբավարար է: Նրա գլխավոր խնդիրն է ձևավորել անհրաժեշտ և բավարար իրավական, տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային պայմաններ նրա համար, որպեսզի մարդը, դրանցից օգտվելով, կարողանա ինքնուրույն ապահովել իրեն և իր ընտանիքին արժանապատիվ ապրուստ: Ընդ որում, ոչ թե պետական բյուջեի միջոցով ազգային եկամուտները վերաբաշխելու և ինչ-որ արտոնություններ ու նպաստներ ստանալու հաշվին, այլ իր աշխատանքի, նախաձեռնության, ձեռներեցության, պրոֆեսիոնալիզմի, աշխատասիրության և կազմակերպվածության շնորհիվ: Դրանով հանդերձ պետությունը երաշխավորում է, այդ թվում և իր հաշվին, արժանապատիվ կյանք նրանց, ովքեր, օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, ինքնուրույն չեն կարող լուծել իրենց խնդիրները (աճող սերունդը, թոշակառուները, հաշմանդամները, քրոնիկ հիվանդները, ժամանակավոր գործազուրկները): Վերջին դեպքում պետությունը իր վրա պարտավորություն է վերցնում քաղաքացիներին տրամադրել այն բարիքները, որոնք չեն կարող նրանց առաջարկվել մասնավոր տնտեսության ինքնագնելիության բազայի վրա, այնպիսիք, ինչպիսիք են առողջապահությունը, դաստիարակությունը, կրթությունը և այլն:

Պետության սոցիալական գործառույթները

կարող են ներկայացվել որպես մի քանի ենթագործառույթների միագումարություն, օրինակ, պրոֆեսոր Մ. Գրուշևսկու խմբագրության մեջ: Որպես դրա առաջավոր բաղկացուցիչներ նա առանձնացնում է.

1) **պաշտպանական գործառույթը** (մարդու, նրա կյանքի, առողջության և արժանապատվության սոցիալական անվտանգության ապահովումը, ընտանիքի և մայրության աջակցությունը, գործազուրկների և զառամյալ տարիքի, երիտասարդության մասին հոգսը),

2) **կարգավորող գործառույթը** (տնտեսության մեջ կառուցվածքային բարեփոխումների անցկացումը՝ նպատակ ունենալով մեծացնել դրա սոցիալական ուղղվածությունը, սեփականության ոչ պետական ձևերի իրավական հիմքերի, գնագոյացման գործընթացների նորմերի ամրապնդումը, բնակչության շերտերի միջև պետական բյուջեի միջոցով եկամուտների վերաբաշխումը, սոցիալական ծրագրերի բյուջետային ֆինանսավորումը, բարեգործական գործունեության նորմատիվ-իրավական կարգավորումը),

3) **կայունացնող գործառույթը** (սոցիալական համաձայնության և գործընկերության, սոցիալական արդարության, «սեփական էթնիկ ճանապարհի» վրա մարդու իրավունքի ապահովումը և այլն),

4) **վերահսկիչ-պահպանողական գործառույթը** (սեփականատիրոջ կողմից իր իրավունքների օգտագործման դեպքում հասարակական նորմատիվներին համապատասխանելու վերահսկողությունը, գոյություն ունեցող օրենսդրությանը հետևելը): Այս առումով հատուկ նշանակություն է ձեռք բերում իրենց և համաժողովրդական սեփականության շահագործման հետևանքների, համապատասխան իրավական պահանջների չպահպանելու դիմաց սեփականատերերի սոցիալ-իրավական պատասխանատվության մասին սահմանադրական պահանջների իրացումը¹:

Իրացնելով սոցիալական գործառույթները, սոցիալական պետությունը հենվում է նորմատիվորեն ամրագրված (օրենսդրորեն կամ էլ ենթօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի հիման վրա) սոցիալական ստանդարտների համակարգի վրա, այսինքն՝ պետության կողմից ամրագրված կամ թույլատրված հասարակության պատկերացումները իր համար ընդունելի մարդկանց մեծամասնության կյանքի մակարդակի և որակի ստանդարտների ներդրումը հանդիսանում է սոցիալական պետության կառավարչական գործունեու-

թյան կարևորագույն բաղկացուցիչներից մեկը: Գրանց գլխավոր նշանակությունն է օգնել պետությանը իր սոցիալական պարտականությունների կատարման մեջ, այսինքն՝ սոցիալական բարիքների օրենսդրորեն սահմանված միագումարությունը, որը նա երաշխավորում է տրամադրել իր քաղաքացիներին անհատույց կամ մասնակի հատուցանելի հիմքի վրա: Նպատակն է բացառել կամ ծայրահեղ դեպքում նվազագույնի հասցնել հասարակության մեջ չարդարացված սոցիալական տարբերությունները²:

Արդյունավետ և հասարակության մեջ նորմալ ընդունվող սոցիալ-տնտեսական քաղաքականության կողմնորոշիչներ են հանդիսանում սոցիալական ստանդարտների ցածր նշանակությունները, որոնց սահմաններից դուրս գալը հասարակության մեջ առաջացնում է ավելցուկային սոցիալական լարվածություն, իսկ հետագայում բերում է երկրի տնտեսական և հասարակական կայունության քայքայմանը, և վերին ստանդարտները, որոնք ապահովում են մարդու նորմալ գոյակցությունը: Մեր երկրում սոցիալական ստանդարտների ներքին սահմանը համարվում է միջազգային կազմակերպությունների (ԱՄԿ, ՅՈՒՆԵՍԿՕ, ՅՈՒՆԻՍԵՖ, ԱՀԿ և այլն) հանձնարարականները, վերին սահմանը՝ զարգացած շուկայական և սոցիալապես ուղղորդված տնտեսությամբ երկրներում կյանքի մակարդակը (Գերմանիա, Շվեդիա, ԱՄՆ և այլն):

Սահմանելով ներքին և վերին սահմանները՝ կարելի է օրենքների և այլ նորմատիվ ակտերի, տնտեսական լծակների միջոցով հասնել տրված արդյունքներին: Այդ սոցիալական չափիչներին հարկավոր է դասել եկամուտների մեծությունը (այդ թվում՝ աշխատավարձի, թոշակների, նպաստների, կրթաթոշակների, սպորտստի նվազագույնի չափը), սպառողական գների ինդեքսը, աշխատավարձի պարտքը, գործազրկության մակարդակը, ամենաշատ և ամենաքիչ ապահովված բնակչության եկամուտների հարաբերակցությունը և այլն:

- ¹ Տե՛ս Грушевский М. Актуальные проблемы теории современного демократического государства.-Киев. 2009. С. 158.
² Տե՛ս Большой юридический словарь. Под ред. А.Я. Сухарева и В.Д. Зорькина. –М., 1999. С. 647.

Արտակ Մանուկյան

Главный специалист отдела юридической консультации
 юридического департамента администрации
 Национального Собрания Республики Армения,
 соискатель института философии, социологии и права
 Национальной Академии Наук Республики Армения

ՔԵԶԻՍԵ

Функции национального социального государства

Эта статья относится к сущности функций социального государства, содержания и анализа этих основных особенностей.

Статья подробно анализирует традиционные методы функций социального государства, таковыми являются директивно-императивные и индикативные (консультативный) и диспозитивные методы, а также правоприменение, веры, прогнозирование, планирование, проектирование и надзор этих форм.

Кроме того, явным ограничением является анализирование социального государства только функцией социальных государств, поэтому статья полностью охватывает основные проблемы социального государства, где необходимы достаточные правовые, экономические, политические и социально-культурные условия, чтобы человек, используя их, обеспечил для себя и своей семьи необходимое благополучие.

Ключевые слова: социальная, функция, экономический, развитие, общество.

Artak Manukyan

Chief specialist of the Division of Legal advises of the Juridical
 Department of the National Assembly of the Republic of Armenia,
 Researcher of the National Academy of Sciences of
 philosophy, sociology and law Institute.

SUMMARY

The National social state functions

This article refers to the essence of the social state functions, the content and the analysis of their main features.

The article is detailed analysis of the implementation of the traditional functions of social state, which are: directive-imperative, indicative (consultative) and dispositive methods, as well as legal enforcement, belief, forecasting, drafting, organizing of the planning and controlling forms.

Moreover, it's lack of an obvious limitation of the social states just social functions analysis, so the article scrupulously covers the main social problem, where is necessary sufficient legal, economic, political and social-cultural conditions, where the individual by using them can be able to provide for himself and his family the well-being.

Keywords: social, function, economic, development, society.